


Հաստատում եմ  
Դպրոցի տնօրեն

31.08.2023  
Լ.Սարաջյան



ԴԱՍՂԵԿԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱԲՈՎՅԱՆԻ Հ.4 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

10 հումանիտար 2ԴԱՍԱՐԱՆԻ

ԴԱՍՂԵԿ՝ Մարինա Ստեփանյան

2023-2024 ՈՒՍ. ՏԱՐԻ

## ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասավարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հուլիսի 25-ի N 1392-Ն որոշում,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, կետ 74)

### Սովորողի իրավունքներն ու պարտականությունները

111. Դպրոցում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

112. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ՝ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև դպրոցում առկա հոսքը, ստանալու վճարովի կրթական ծառայություններ.

3) անվճար օգտվելու դպրոցի ուսումնանյութական բազայից.

4) ստանալու կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բավարարմանն ուղղված աջակցություն.

5) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

6) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները կամ ունեցությունն է կատարվում նրա պատվի ու արժանապատվության նկատմամբ.

7) դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

8) ազատորեն փնտրելու և մատչելի կերպով ստանալու ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

9) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

10) խրախուսվելու օրինակելի վարքի կամ բարձր առաջադիմության համար.

11) օգտվելու օրենքով և դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված այլ իրավունքներից:

113. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել դպրոցի կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների ու կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով ու դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ պարտականություններ:

114. Հանրակրթական դպրոցն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ՝ համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

115. Յուրաքանչյուր սովորող տարեկան առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (կանխարգելիչ) հետազոտություն, որն իրականացվում է դպրոցի բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրա անհնարիության դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

116. Դպրոցում կարգապահությունն ապահովվում է օրենքով, կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:

117. Դպրոցի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով ու կանոնադրությամբ սահմանված կարգով միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն:

118. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը նոր

կարգապահական խախտում թույլ չի տվել և իրեն դրսևորել է որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ սովորող:

119. Սույն օրինակելի կանոնադրության 117-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ ուսումնական տարվա ընթացքում նույն սովորողի նկատմամբ կրկնակի կիրառվելու դեպքում դպրոցը կարող է դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմին՝ երեխայի համար սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու վերաբերյալ առաջարկությամբ:

120. Սովորողների համար հիմնադրի, նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցի, ինչպես նաև սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:

107. Դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որն ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքների համապատասխան՝ դպրոցի գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու, դրանք դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ ներկայացնելու, սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով և ղեկավարվում է նախարարության կողմից հաստատված աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ:

108. Աշակերտները կարող են նաև ըստ հետաքրքրությունների ստեղծել ակումբներ, միավորումներ, որոնք աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ են:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հունիսի 25-ի N 1392-Ն որոշում,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ը Ի Ն Ա Կ Ե Լ Ի  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ )

## Ծնողական խորհուրդ

96. Դասարանների ծնողական խորհուրդները (կազմված՝ նախագահից և երկուսից չորս անդամից) ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար:

97.

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է:

98. Դպրոցի ծնողական խորհրդի նախագահը խորհրդին իստիցառնվազներեքօր առաջ խորհրդի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին: Ծնողական խորհրդի որոշմամբ՝ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

99. Դասարանական նպրոցական ծնողական խորհուրդներին իստերնիրավագորեն, եթե դրանց մասնակցում է ծնողական խորհուրդների անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհուրդների յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:

100. Դասարանական ծնողական խորհուրդներին իստերնիմասնակցում են դասղեկները, իսկ նպրոցական ծնողական խորհրդի նիստերին՝ տնօրենը:

101.101.

Համադպրոցական հարցերի քննարկման համար ծնողական խորհուրդը հրավիրում է ընդհանուր ժողովներ: Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն նպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ՝ առնվազն չորս անգամ, համադպրոցական ժողովներ՝ առնվազն երկու անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդների և դասղեկների նախաձեռնությամբ՝ կարող են հրավիրվել արտահերթ համադպրոցական և դասարանական ծնողական ժողովներ:

102. Դպրոցի ծնողական խորհուրդը՝

1) դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան՝ իր կազմից առաջադրում է խորհրդի անդամության թեկնածուների: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում փակ քվեարկությամբ առավել ձայներ հավաքած երկու թեկնածուն:

2) դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ:

3) աջակցում է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում:

4) ներկայացնում է ծնողներին անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, մասնակցում դրանց մշակման և տրամադրման միջոցառումներին:

5) լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները.

6) ամրապնդում է դպրոցի և ծնողների միջև կապերը, մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության նկատմամբ ձևավորում է միասնական պահանջներ.

7) ծնողներին ներգրավում է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում.

8) օգնում է դպրոցին՝ սովորողների հիմնական պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում.

9) մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում է դպրոցի ուսումնականության բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների.

10) մասնակցում է ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին.

11) աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը.

12) ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում.

13) ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ.

14) ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվությանը:

103. Դպրոցի ծնողական խորհուրդը համագործակցում է դպրոցի մանկավարժական և այլ խորհուրդների հետ:

104. Դպրոցի ծնողական խորհուրդը կարող է տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկ ներկայացնել դպրոցի խորհրդին:

105. Ծնողական խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի արձանագրությունները: Համադպրոցական նդասարանական ծնողական ժողովներին նիստերի արձանագրությունները և նդունված որոշումները երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են դպրոցի կայքէջում:

106. Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար դպրոցի ծնողական խորհուրդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել այլ լիազորություններ:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հունիսի 25-ի N 1392-Ն որոշում,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ )

	ԱԱՀ	Ծննդյան օր, ամիս, տարի	Շարժի համարը	Հասցե, Հեռախոս
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				
9.				
10.				
11.				
12.				
13.				
14.				
15.				
16.				
17.				
18.				
19.				
20.				
21.				
22.				
23.				
24.				
25.				
26.				
27.				
28.				
29.				
30.				
31.				
32.				
33.				
34.				
35.				

--	--	--	--	--

**ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ)**

10 հուլիսից 2 դասարանը համերաշխ կոլեկտիվ է: Դասարանում սովորում է 21 աշակերտ, որից 6 տղա, 14-ը՝ աղջիկ:  
Երեխաները հարգանքով են վերաբերվում միմյանց, սիրում են դասարանով էքսկուրսիա գնալ, կինո և թատրոն հաճախել:

**2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍ ՏԱՐՎԱ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու նպանակով պլանավորում են մի շարք միջոցառումներ, սեմինարներ, առարկայական վիկտորինաներ, ինտելեկտուալ խաղեր: «Մարդու ինտելեկտը բնութագրում է նրա վարքը»: Առաջնորդվելով այս կարգախոսով, զարգացնել աշակերտների ուսումնական հետաքրքրությունները, բարձրացնել նրանց ընդհանուր ուսումնական հմտությունների և կարողությունների զարգացման աստիճանը:



### 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

<p>3.1. ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</p>
<p>Հայեցի դաստիարակության շրջանակներում նախատեսված են էքսկուրսիաներ դեպի Հայաստանի պատմական տեսարժան վայրեր՝ Խոր Վիրապ, Գոշավանք, Նորավանք, Երևանի Պատմության Թանգարան և այլն:</p>
<p>3.2. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</p>
<p>Գեղագիտական ճաշակ ձևավորելու նպատակով աշակերտների հետ այցելել Երևանի Պետական Պատկերասրահ, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, Սունդուկյանի անվան թատրոն, Ստանիսլավսկու անվան թատրոն և այլն:</p>
<p>3.3. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</p>
<p>Ռազմահայրենասիրական դաստիարակությանը հատկացնել դասղեկի ժամեր, մշտապես խոսել դասերին, պատմել հայ մեծերի մասին, անցկացնել միջոցառումներ, շնորհանդեսներ:</p>
<p>3.4. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</p>
<p>«Ավելի արագ, քարձր, ուժեղ»: Օլիմպիական այս կարգախոսով առաջնորդվել ֆիզկուլտուրայի դասերին: Մասնակցել սպորտային միջոցառումներին: «Առողջ մարմնում՝ առողջ ոգի», առողջ ապրելու մասին խոսել ամեն օր:</p>
<p>3.5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</p>
<p>Աշխատանքային դաստիարակությունը իրականացնել դասարանի սանիտարական վիճակը պահպանելով: Կազմակերպել դասարանի հերթապահության գրաֆիկ, մասնակցել համադպրոցական շաբաթօրյակներին:</p>

### 3.6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Սերմանել աշակերտների մեջ սեր դեպի բնությունը, զբաղվել նրանց բնապահպանական դաստիարակությամբ: Դաստիարակել աշակերտներին պատասխանատու լինել վաղվա օրվա նկատմամբ, հայրենիքի էկոլոգիայի նկատմամբ:

### 3.7. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Պարբերաբար անցկացնել ծնողական ժողովներ: Լինել տեղեկացված երեխաների խնդիրների և հաջողությունների մասին: Լինել Մշտական կապի մեջ ծնողների հետ, ընդգրկել նրանց դասարանի առօրյա կյանքին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆԲՈՎԱՆԴԱԿ  
ՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքներ իրականացվողությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1.	Սեպտեմբերի 1-ին անցկացնել գիտելիքի օր: Կազմակերպել գրքերի բաշխում:	Սեպտեմբերի 1, 2023	Դասղեկ
2.	Հրավիրել ծնողական ժողով, կազմակերպել ծնողական խորհրդի ընտրություններ:	Սեպտեմբերի 13, 2023	Դասղեկ
3.	Պլանավորել տարվա աշխատանքների ծրագիր:	Սեպտեմբերի 8, 2023	Դասղեկ
4.	Դասղեկի ժամին անցկացնել աշակերտական խորհրդի ընտրություններ: Աշակերտների հետ համատեղ կազմել դասարանի կենսագործունեության պլան առաջին կիսամյակի համար:	Սեպտ. 8	Դասղեկ, աներ
5.	Կազմակերպել էքսկուրսիա դեպի Դսեղ, Հ. Թումանյանի տուն-թանգարան	Հոկտեմբերին	Դասղեկ, ծնող. խորհ.
6.	Մասնակցել դպրոցում անցկացվող միջոցառումներին:	Ամբողջ տարի	Դասղեկ
7.	Դասղեկի ժամերին գրուցել բարոյա-դաստիարակչական թեմաներով:		Դասղեկ
8.	Այցելել Սունդուկյանի անվան թատրոն	Հոկտեմբեր	Դասղեկ, ծն. խոր-դ
9.	Այցելել Եռաբլուր:	նոյեմբեր	Դասիսեկ, ծն. խ-րդ
10.	Անցկացնել շնորհանդես «Ի՞նչ է ՁԻԱՀ-ը» թեմայով:	Դեկտեմբեր	Դասղեկ, աշ. խ-րդ
11.	Կազմակերպել միջոցառում «Աշխարհի ազգերի սովորությունները և ծեսերը»	Դեկտեմբեր	Դասղեկ, աշ. խ-րդ

	Ամանօրի վերաբերյալ		
	II ԿԻՍԱՄՅԱԿ		
Ուսումնական շաբաթներ	Մասնակցել համադպրոցական միջոցառմանը, նվիրված Հայոց Բանակի օրվան:	Հունվարի 26-ին	Դասղեկ, աշ. խ-րդ
	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
	Մասնակցել դպրոցում կազմակերպվող «Ասմունքի մրցույթին»	Փետրվար	Դասղեկ, աշակերտներ
	Միջոցառում, նվիրված կանանց Միջազգային օրվան	Մարտի 7	Դասարանի աշ. խորհուրդ
	Այցելել Հայաստանի Պետական պատկերասրահ	Գարնանային արձ-ին	Դասղեկ, ծն. խոր-դ
	Այցելել Հայաստանի պատմության թանգարան	Ապրիլ	Դասղեկ, ծն. խոր-դ
	Հիշում և պահանջում ենք: Այցելել եղեռնի թանգարան:	Ապրիլի 25	Դասղեկ, ծն. խ-րդ
	Կազմակերպել էքսկուրսիա Երեվանի կենտրոնով	Մայիս	Դասղեկ, ծն խ-րդ
	Կազմակերպել տարեվերջյան էքսկուրսիա դեպի Դիլիջան-Հաղարծին	Հունիս	Դասղեկ, ծն խ-րդ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքներ իրականացվողները	Կատարման ժամկետը	Կատարողներ












ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ,  
ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԵՂԸ
1. 09.2023	Գիտելիքի Օր	№4 Ավագ դպրոց
2.5. 10.2023	Ուսուցչի Օրվան նվիրված միջ-մ	№ 4 ավագ դպրոց

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ,  
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ

	Նախասիրական- առարկայական խմբակ	Գեղարվեստական, երաժշտական խմբակ	Մարզական խմբակ	Այլ խմբակ
1		Գեղարվեստի դպրոց		
2				Թումո
3				
4		Երգի պետական թատրոն		
5				
6				Պատանի երկրապահների միություն
7				
8				
9		Պարի խմբակ		
10				
11				
12			Վոլեյբոլի խմբակ	
13				
14				
15		Պարի խմբակ		
16		Երաժշտական ստուդիա		
17				
18			Վոլեյբոլի խմբակ	
19			Վոլեյբոլի խմբակ	
20	Անգլերենի խմբակ			Թումո
21				
22				
23				
24				
25				
26				
27				
28				
29				
30				
31				
32				
33				

34			
----	--	--	--

**ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ**

Անցկացման օրը	Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, գրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներնայլն) բովանդակությունը	Ծանոթություն
1.09.2023	Գիտելիքը ամենալավ հարստությունն է:	
9.09.2023	Մեր նախասիրությունները:	
15.09.2023	Առողջ ապրելակերպ, անձնական հիգիենա:	
22.09.2023	Ես իմ դասընկերների աչքերով	
6.10.2023	Ինչպիսի երաժշտություն եմ սիրում	
13.10.2023	Ինչպես հասցնել ամեն ինչ	
20.10.2023	Խոսենք պատասխանատվության մասին	
27.10.2023	Հանդուրժողականության մասին	
3.11.2023	«Իմ ներաշխարհը»	
10.11.2023	Համբերություն և համբերատարություն	
17.11.2023	«Մեր մեծերը» շարքից՝ Միեր Մկրտչյան	
24.11.2023	Ինչպիսին է քաղաքակիրթ մարդը	
1.12.2023	«Ինչգիտենք «ՁԻԱՀ»-ի մասին	
8.12.2023	Ինչ է բարոյական դաստիարակությունը:	
15.12.2023	Ինչն է ձևավորում մարդու աշխարհընկալումը և աշխարհայացքը:	
22.12.2023	Ավանդական տոներ և ծեսեր. Ամանօր	

12.01.2024	Մեր մեծերը. Արամ Խաչատրյան	
Անցկացման օրը	Դաստիարակի անցկացման միջոցառման (դասախոսություն, գրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
26.01.2024	Մեր հերոսը մեր զինվորն է	
2.02.2024	Եթե ես երկրի նախագահը լինեի՝	
9.02.2024	«Ամեն ինչի սկիզբը սերն է»	
16.02.2024	Ինչով կարելի է հպարտանալ, խոսելով Հայաստանի մասին	
23.02.2024	«Մարդիք, առանց որոնց ես միայնակ եմ»	
1.03.2024	Գեղեցիկն ու տգեղը մեր կյանքում	
15.03.2024	«Ուրում եմ և կարող եմ»	
22.03.2024	Եթե ես լինեի դպրոցի տնօրենը	
5.04.2024	Որտեղից է սկսվում Հայրենիքը. իմ քաղաքը	
12.04.2024	Ապագան սկսվում է այսօր	
19.04.2024	Հանճար չեն ծնվում	
26.04.2024	«Ձեզ եմ դիմում տիկնայք և պարոնայք»	
3.05.2024	Ես սիրում եմ ապրել. առողջ ապրելակերպ	
17.05.2024	Մեր հերոսները Արցախյան պատերազմում	
24.05.2024	Եթե ես ուսուցիչ լինեի՝	












ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ

--



